ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐՈՒՄ ԿԱՐԾՐԱՏԻՊԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Նոյեմբեր | 2023

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐՈՒՄ ԿԱՐԾՐԱՏԻՊԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Մշտադիտարկումը նպատակ ունի պարզելու, թե Հայաստանյան լրատվամիջոցներում՝

- որոնք են առավել հաճախ կիրառվող բացասական կարծրատիպերը,
- ովքեր են առավել հաճախ հնչեցնում այդ կարծրատիպերը,
- արդյոք ներկայացվում են մեղադրանքները հաստատող փաստեր, փաստարկներ:

Մշտադիտարկումն իրականացվել է Ամերիկայի ժողովրդի առատաձեռն աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության միջոցով իրականացվող «Հայաստանի մեդիայի զարգացման ծրագրի» շրջանակում: Ծրագիրն իրականացնում է «Ինտերնյուս» կազմակերպությունը՝ Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի, Երեւանի մամուլի ակումբի եւ «Զինք» միջազգային կազմակերպության հետ համատեղ:

Բովանդակություն

Մշտադիտարկման նպատակները եւ մեթոդաբանությունը ……..… 4

Մշտադիտարկման առարկա լրատվամիջոցները ……...……... 7

Մշտադիտարկման ամփոփ եւ թվային արդյունքները ……. 8

Դիտարկումներ …..……..…….. 8

Թվային տվյալներ ……..……...……. 11

| Մշտադիտարկման նպատակները եւ մեթոդաբանությունը

Մշտադիտարկման նպատակները

1. Պարզել, թե որ խմբի՝
- գործող իշխանության ներկայացուցիչների,
- նախորդ իշխանությունների (մինչեւ 2018թ. մայիսի 8-ը) ներկայացուցիչների,
- հասարակության տարբեր շերտերի ներկայացուցիչների

նկատմամբ են **առավել հաճախ կիրառվում հայաստանյան լրատվամիջոցներում, հանրային քննարկման դաշտում շրջանառվող բացասական կարծրատիպերը**:

2. Պարզել, թե լրատվամիջոցում տեղ գտած, հրապարակված կարծրատիպ(եր)ի նկատմամբ **ինչ արձագանք են ցուցաբերում տվյալ հաղորդման, հրապարակման ժամանակ՝**
- համաձայն են,
- համաձայն չեն,
- չեզոք մոտեցում ունեն:

3. Պարզել, թե **ովքեր են առավել հաճախ արտահայտում, հնչեցնում կարծատիպերը՝**
- լրագրող/հաղորդման հեղինակ,
- հաղորդման հյուր/ռեպորտաժի հերոս:

4. Պարզել, թե արդյոք հնչած, հրապարակված կարծրատիպերն **ուղեկցվել են ատելության, բռնության խոսքով**:

5. Պարզել, թե արդյոք հնչած կարծրատիպերին զուգահեռ **ներկայացվել են մեղադրանքները հաստատող փաստեր, փաստարկներ, տեղեկություններ:**

6. Պարզել, թե արդյոք հնչած կարծրատիպերն **ուղեկցվել են անձնական վիրավորանքներով:**

Մշտադիտարկման մեթոդաբանությունը

Մշտադիտարկման առարկա են հանդիսացել **հայաստանյան ութ լրատվամիջոցների** հիմնական լրատվական թողարկումները, բանավիճային («հյուրը ստուդիայում» ձեւաչափով հարցազրույց) հաղորդումները եւ տեքստային հրապարակումները (հոդված, սյունակ, խմբագրական, հարցազրույց):

Մշտադիտարկված ութ լրատվամիջոցներն են՝
1. *«Առավոտ»,*
2. *«Հայաստանի հանրային հեռուստաընկերության Առաջին ալիք»,*
3. *«Հայաստանի հանրային հեռուստաընկերության Առաջինի լրատվական ալիք»,*
4. *«Հայկական երկրորդ հեռուստաալիք»,*
5. *«Երկիր Մեդիա»,*
6. *«168 ժամ»,*
7. *«1in.am»,*
8. *«Civic.am»:*

Լրատվամիջոցների ընտրությունը պայմանավորված է Հայաստանի քաղաքական դաշտում դրանց դիրքավորմամբ, ինչպես նաեւ բովանդակության հեռարձակման

ձեւաչափերի բազմազանությամբ, քաղաքական իրադարձությունների նկատմամբ ուշադրությամբ եւ հանրային կարծիքի վրա ունեցած ավանդական ազդեցությամբ:

Մշտադիտարկման հիմնական միավորը հեռուստանյութն ու տեքստային նյութն են: Հեռուստանյութ ասելով՝ հասկանում ենք լրատվական թողարկման առանձին սյուժեն (ռեպորտաժ եւ այլն) եւ բանավիճային ամբողջական հաղորդումը: Հաղորդման ընթացքում հնչած անոնսները, հաղորդավարի՝ սյուժեին նախորդող խոսքը դիտարկվել է որպես տվյալ հեռուստանյութի մաս: Տեքստային նյութի պարագայում նկատի ունենք տեքստային ձեւաչափով հրապարակումները՝ հոդված, սյունակ, խմբագրական, հարցազրույց:

Մշտադիտարկումից դուրս են մնացել առեւտրային ու սոցիալական գովազդը, հովանավորված հրապարակումները, հայտարարությունները եւ դիտարկվող հեռուստահաղորդումների ժամանակ «վազող տողը»:

Մշտադիտարկման ժամանակ որպես կարծրատիպեր են դիտարկվել ներքոնշյալ երեք խմբերին հասցեագրված մեղադրանքները՝
1. Գործող իշխանությունների ներկայացուցիչների պարագայում.
- բացասական կարծրատիպեր՝ կապված «դավաճանության», «հողերի հանձնման», «կապիտուլյացիայի», Հայաստանին ու Արցախին պատուհասած դժվարությունների ու դժբախտությունների, «ազգին կործանման տանող» գործողությունների հետ եւ այլն,
- բացասական կարծրատիպեր՝ կապված երկրի անարդյունավետ, ձախողված կառավարման հետ:

2. Նախորդ իշխանությունների (մինչեւ 2018թ. մայիսի 8-ը) ներկայացուցիչների պարագայում.
- բացասական կարծրատիպեր՝ կապված 44-օրյա պատերազմի արդյունքների համար պատասխանատվության եւ ԼՂ «կապիտուլյացիայի» հետ,
- բացասական կարծրատիպեր՝ կապված այն մեղադրանքների հետ, որ երկիրը ղեկավարելիս եղել են «կոռումպացված, բնակչությանը կողոպտել են, բռնությունների ենթարկել» եւ այլն:

3. Հասարակության տարբեր շերտերի ներկայացուցիչների պարագայում.
- բացասական կարծրատիպեր՝ կապված ի վնաս Հայաստանի շահերի, հօգուտ այլ պետությունների գործելու մեղադրանքների հետ, թե նրանք գործակալներ են, լրտեսներ, «հինգերորդ շարասյան» ներկայացուցիչներ եւ այլն,
- բացասական կարծրատիպեր՝ ԼՂ պաշտոնյաների կողմից հայկական ազգային շահերը (ընդհանուր առմամբ) «դավաճանելու» մեղադրանքների եւ Արցախը «հանձնելու» հետ կապված,
- բացասական կարծրատիպեր՝ երբ Հայաստանում հանցագործություններ եւ ապօրինություններ կատարած անձանց պարագայում ընդգծվում է նրանց ղարաբաղյան ծագումը:

Յուրաքանչյուր հեռուստանյութի եւ տեքստային հրապարակման պարագայում դիտարկվել է՝
- արդյոք առկա է նշված կարծրատիպերից որեւիցե մեկը,
- ինչ արձագանք է ստանում տվյալ կարծրատիպը լրատվամիջոցի հրապարակման ժամանակ՝ արտահայտվում է համաձայնություն, անհամաձայնություն կամ չեզոք դիրքորոշում է ցուցաբերվում,
- ովքեր են առավել հաճախ արտահայտում, հեղինակում լրատվամիջոցներում հրապարակվող կարծատիպերը՝ լրագրո՞ղը/հաղորդման հեղինա՞կը, թե՞ հաղորդման հյուրը/ռեպորտաժի հերոսը,
- արդյոք հրապարակված կարծրատիպերը ուղեկցվել են ատելության/բռնության խոսքով,

- արդյոք հնչած կարծրատիպերին զուգահեռ ներկայացվել են մեղադրանքները հաստատող փաստեր, փաստարկներ, տեղեկություններ,
- արդյոք հնչած կարծրատիպերն ուղեկցվել են անձնական վիրավորանքներով:

Մշտադիտարկումն իրականացվել է 2023 թվականի հոկտեմբերի 1-31-ը:

| Մշտադիտարկման առարկա լրատվամիջոցները

1. «Առավոտ» (www.aravot.am)
Մշտադիտարկման առարկա են եղել՝
- տեքստային նյութերը՝ հոդված, սյունակ, խմբագրական, հարցազրույց:

2. «Հայաստանի հանրային հեռուստաընկերության Առաջին ալիք» (www.1tv.am)
Մշտադիտարկման առարկա են եղել՝
- «Լուրեր» լրատվական ծրագրի հիմնական թողարկումը (երկուշաբթի-շաբաթ) եւ «Լուրերի» կիրակնօրյա թողարկումը,
- հասարակական-քաղաքական/բանավիճային հաղորդում՝ «Հարցազրույց Պետրոս Ղազարյանի հետ» (երկուշաբթի-ուրբաթ):

3. «Հայաստանի հանրային հեռուստաընկերության Առաջինի լրատվական ալիք» (www.1lurer.am)
Մշտադիտարկման առարկա են եղել՝
- հասարակական-քաղաքական/բանավիճային հաղորդումներ՝ «Տարբեր կարծիքներ Աստղիկ Սարգսյանի հետ» (երկուշաբթի, չորեքշաբթի, ուրբաթ), «Հանրային քննարկում» (կիրակի):

4. «Հայկական երկրորդ հեռուստաալիք» (www.tv.am)
Մշտադիտարկման առարկա են եղել՝
- «Լրաբեր» լրատվական ծրագրի հիմնական թողարկումը (երկուշաբթի-շաբաթ),
- հասարակական-քաղաքական/բանավիճային հաղորդում՝ «Խոսքի իրավունք» (երկուշաբթի-ուրբաթ):

5. «Երկիր Մեդիա» (www.yerkirmedia.am)
Մշտադիտարկման առարկա են եղել՝
- «Երկիրն այսօր» լրատվական ծրագրի հիմնական թողարկումը (երկուշաբթի-շաբաթ) եւ «Կիրակնօրյա Երկիրը»,
- հասարակական-քաղաքական/բանավիճային հաղորդում՝ «Երկրի հյուրասրահը» (երկուշաբթի-շաբաթ):

6. «168 ժամ» (www.168.am)
Մշտադիտարկման առարկա են եղել՝
- «Պրեսսինգ», «Ռեվյու», «Օրախնդիր» բանավիճային հաղորդումները:

7. «1in.am» (www.1in.am)
Մշտադիտարկման առարկա են եղել՝
- հասարակական-քաղաքական/բանավիճային հաղորդումները, որոնք հեռարձակվել են երեկոյան եթերում (21.00-23.00),
- լուրերի երեկոյան թողարկումը:

8. «Civic.am» (www.civic.am)
Մշտադիտարկման առարկա են եղել՝
- տեքստային նյութերը՝ հոդված, սյունակ, խմբագրական, հարցազրույց:

| Մշտադիտարկման ամփոփ եւ թվային արդյունքները

Հայաստանյան վերոհիշյալ ութ լրատվամիջոցների մշտադիտարկման ընթացքում՝ 2023թ. հոկտեմբերի 1-31-ը, վեր են հանվել **210 հրապարակումներ**, որոնցում **233 անգամ անդրադարձ է արվել նշված կարծրատիպերին:**

Դիտարկումներ

Մշտադիտարկման թվերը վկայում են, որ նշված ժամանակահատվածում ութ լրատվամիջոցներում տեղ գտած բացասական կարծրատիպերի շուրջ 73%-ը վերաբերում է գործող իշխանությունների ներկայացուցիչներին *(Աղյուսակ 1):* Ընդ որում, հնչող մեղադրանքները գրեթե ամբողջությամբ առնչվում են Լեռնային Ղարաբաղի խնդրին, Ադրբեջանի հետ հակամարտությանը *(կիրառված ընդհանուր կարծրատիպերի 69.9%, Աղյուսակ 1, կետ՝ 1.1.):* Թեմային առնչվող նման բարձր թվերն, անշուշտ, կարելի է բացատրել այն հանգամանքով, որ հիմնախնդիրը շարունակում է մնալ որպես Հայաստանի առջեւ ծառացած առաջնային՝ գոյութենաբանական մարտահրավեր:

Ուշադրություն է գրավում, որ իշխանությունների ներկայացուցիչների հասցեին հնչած կարծրատիպերն ամենից շատ տեղ են գտել «Առավոտի» հրապարակումներում՝ իշխանությունների ուղղությամբ հնչեցված բոլոր կարծրատիպերի 36.5%-ը: Աչքի է զարնում նաեւ այն, որ այս ցուցանիշով «Առավոտն» էապես առաջ է ընդդիմադիր քաղաքական ուժերի հետ կապվող լրատվամիջոցներից՝ «168 ժամ», «Հայկական երկրորդ հեռուստաալիք», «Երկիր Մեդիա» *(Աղյուսակ 2):*

Գործող իշխանություններին առնչվող հաջորդ առանձնացող հանգամանքն այն է, որ նրանց հասցեագրված բացասական կարծրատիպերի շուրջ 40%-ն ուղեկցվել է անձնական վիրավորանքներով, ինչը բոլորովին այլ տեսք ունի նախորդ իշխանությունների ներկայացուցիչների (13.1%) եւ հասարակության տարբեր շերտերի ներկայացուցիչների (22.5%) պարագայում, որտեղ կարծրատիպերը զուգորդվել են անձնական վիրավորանքի անհամեմատ ցածր մակարդակով (Աղյուսակ *5):*

Գործող իշխանությունների ներկայացուցիչների հասցեին հնչած բացասական կարծրատիպերի 14.7% դեպքերում չեն ներկայացվել մեղադրանքները հաստատող փաստեր, փաստարկներ, տեղեկություններ: Մյուս խմբերի գծով այս թիվը զգալիորեն ավելի մեծ է՝ հասարակության տարբեր շերտերի ներկայացուցիչների պարագայում հիմնազուրկ մեղադրանքներ են հնչել ընդհանուրի 27.5%-ի դեպքում, իսկ նախորդ իշխանությունների ներկայացուցիչների պարագայում 34.8% դեպքերում *:* Այստեղ հատուկ նշենք, որ սույն հետազոտության նպատակներից դուրս է եղել գնահատելը, թե որքանով հիմնավոր են մեղադրանքներն ամրապնդող փաստերը, փաստարկները կամ տեղեկությունները:

Իշխանության ներկայացուցիչներից հետո, բացասական կարծրատիպերի համեմատաբար մեծ քանակով երկրորդ տեղում հասարակության տարբեր շերտերի ներկայացուցիչներն են՝ 17.2%-ով, իսկ նախորդ իշխանություններին վերաբերող բացասական կարծրատիպերի թիվն ընդամենը 9.8% է *(Աղյուսակ 1):* Սա, թերեւս, արժանի է հատուկ անդրադարձի, քանզի պարզվում է՝ երկրի առջեւ կանգնած խնդիրների, մարտահրավերների, սպառնալիքների համար նախորդ իշխանությունների մեղավորությունը այսօր ամենից փոքրն է դիտվում՝ դատելով հնչեցվող բացասական կարծրատիպերի (մեղադրանքների) նվազ քանակից: Ընդ որում, ինչպես նշեցինք, այդ ցուցիչ-թիվը գրեթե երկու անգամ պակաս է

հասարակության տարբեր շերտերի ներկայացուցիչների վերաբերյալ շրջանառվող բացասական կարծրատիպերի թվից:

Ուշագրավ է, որ հասարակության տարբեր շերտերի ներկայացուցիչներին վերաբերող բացասական կարծրատիպերի շրջանառության գործում հատկապես ակտիվ է եղել իշխանության հետ ասոցացվող «Civic.am»-ը, որում տեղ են գտել այդ խմբի հասցեին հնչեցված բոլոր կարծրատիպերի կեսից ավելին՝ 52.5% *(Աղյուսակ 4):*

Եթե ենթախմբերի մակարդակում, ինչպես նշվեց, առաջին հորիզոնականում է Ղարաբաղյան խնդրի, Ադրբեջանի հետ հակամարտության պատճառով իշխանություններին ուղղված բացասական կարծրատիպերի քանակը *(Աղյուսակ 1, կետ՝ 1.1.),* ապա երկրորդ հորիզոնականում են հասարակության տարբեր շերտերի ներկայացուցիչներին վերաբերողները՝ բոլոր կարծրատիպերի 9.8%-ը *(Աղյուսակ 1, կետ՝ 3.1.):* Այսինքն, եթե հիմնվելու լինենք շրջանառված կարծրատիպերի քանակի վրա, կարող ենք եզրակացնել, որ հանրային մտահոգության, ուշադրության կենտրոնում գտնվող Ղարաբաղյան հիմնահարցի, հայ-ադրբեջանական հակամարտության/հարաբերությունների խնդրից հետո, երկրորդ հորիզոնականում է «դավաճանների», «լրտեսների» թեման, այսինքն, դա չի եղել Ղարաբաղյան խնդրում նախկին իշխանությունների ունցած դերակատարությունը կամ Լեռնային Ղարաբաղի իշխանությունների կողմից Արցախն այս սեպտեմբերին «հանձնելու» թեման:

Նախորդ իշխանություններին վերաբերող կարծրատիպերը գրեթե հավասարաչափ են բաշխվել *(վերաբերում են Ղարաբաղյան հարցին (ընդհանուրի՝ 5.5%-ը) ու կոռումպացված կառավարմանը (ընդհանուրի՝ 4.3%-ը),* ինչը տարբերվում է գործող իշխանություններին ու հասարակության տարբեր շերտերի ներկայացուցիչներին առնչվող պատկերից (*Աղյուսակ 1, կետեր՝ 2.1 եւ 2.2.)*:

Փաստորեն, հայաստանյան ներկայիս խոսույթում Լեռնային Ղարաբաղը «հանձնելու», Ղարաբաղյան հարցում անհաջողություն կրելու առնչությամբ ավելի շատ մեղադրանք է հնչում ԼՂ իշխանությունների, քան Հայաստանի նախկին իշխանությունների հասցեին: Առնվազն՝ այդ խնդրով ԼՂ իշխանությունների հասցեին հնչած բացասական կարծրատիպերի քանակն ավելի շատ է *(ընդհանուրի՝ 6.1%-ը)*, քան Հայաստանի նախորդ իշխանություններին ուղղված մեղադրանքները *(ընդհանուրի՝ 5.5%-ը).* (Աղյուսակ 1, կետեր՝ 2.1. եւ 3.2.): Հնարավոր է, որ արդյունքների վրա ազդեցություն են ունեցել այս տարի սեպտեմբերին Լեռնային Ղարաբաղում տեղի ունեցած ռազմական գործողությունները, դրանց հաջորդած իրադարձությունները եւ Լեռնային Ղարաբաղի իշխանությունների դերակատարությունն այդ ամենում:

Մյուս կողմից, երկիրը վատ կառավարելու առումով Հայաստանի նախկին իշխանությունների հասցեին հնչած բացասական կարծրատիպերի քանակն ավելի շատ է *(ընդհանուրի՝ 4.3%-ը)*, քան ներկայիս իշխանությունների ուղղությամբ գործածված կածրատիպերինը *(ընդհանուրի՝ 3.1%-ը).* տե՛ս Աղյուսակ 1, կետեր՝ 1.2. եւ 2.2.:

Ութ լրատվամիջոցների շարքում ամենից շատ «Առավոտում» են հնչել բացասական կարծրատիպեր՝ ընդհանուրի ավելի քան 33.5%-ը: Ընդ որում, այս առումով ընդդիմադիր քաղաքական ուժերի հետ ասոցացվող լրատվամիջոցներն առաջին եռյակում են «Առավոտը», «168 ժամը», «Հայկական երկրորդ հեռուստաալիքը» *(Աղյուսակ 6):*

Չորս լրատվամիջոցներում *(«Հայկական երկրորդ հեռուստաալիք», «Հայաստանի հանրային հեռուստաընկերության Առաջին ալիք», «Հայաստանի հանրային հեռուստաընկերության Առաջինի լրատվական ալիք», «1in.am»)* ամբողջովին համաձայնվել են հնչած բացասական կարծրատիպերի հետ *(տե՛ս Աղյուսակ 7):*

Ութ լրատվամիջոցներից ամենաշատը «168 ժամի» լրագրողները/հաղորդավարներն են հնչեցրել բացասական կարծրատիպեր: Այդ լրատվամիջոցում տեղ գտած 47 կարծրատիպերից 22-ը (46.8%) հնչեցրել են «168 ժամի» լրագրողները/հաղորդավարները *(Աղյուսակ 8),* եւ այդ կարծրատիպերի մեծամասնությունը վերաբերել է գործող իշխանություններին: Այն, որ լրատվամիջոցի ներկայացուցիչներն են՝ լրագրող/հաղորդավար, նման հաճախականությամբ հնչեցրել բացասական կարծրատիպեր՝ հայտնել դիրքորոշում, կարող է գնահատվել որպես լրագրողական էթիկայի՝ անաչառության սկզբունքի խախտում:

Ատելության խոսքի ամենից մեծ չափաբաժինը գրանցվել է իշխանությունների հետ ասոցացվող «Civic.am»-ի հրապակումներում, ընդ որում՝ հնչեցված կարծրատիպերի 11.8%-ը ուղեկցվել է ատելության/բռնության խոսքով *(Աղյուսակ 9),* ինչը նույնպես լրագրողական էթիկայի խախտում է:

Թե դիտարկված լրատվամիջոցները որքանով են հետեւողական եղել, որպեսզի հնչած բացասական կարծրատիպերն (ըստ էության՝ մեղադրանքները) ուղեկցվեն այն հաստատող փաստերով, փաստարկներով, տեղեկություններով, տեսնում ենք, որ դիտարկված բոլոր ութ լրատվամիջոցներն էլ մեծամասամբ պահպանել են այս սկզբունքը եւ, ընդհանուր առմամբ, հնչած կարծրատիպերի 81.1% դեպքերում ներկայացվել են համապատասխան փաստեր, փաստարկներ, տեղեկություններ:

Եվ վերջապես, կարծրատիպերի ներկայացմանը զուգահեռ, ամենից հաճախ անձնական բնույթի վիրավորանք է թույլ տվել «Հայկական երկրորդ հեռուստաալիքը»՝ իր եթերով հնչեցրած կարծրատիպերի 75%-ի դեպքում: Այս խմբում առաջին երեք հորիզոնականները պատկանում են ընդդիմադիր քաղաքական ուժերի հետ ասոցացվող լրատվամիջոցներին *(«Հայկական երկրորդ հեռուստաալիք», «168 ժամ», «Երկիր Մեդիա». Աղյուսակ 11):*

Թվային տվյալներ

Աղյուսակ 1

№	Բացասական կարծրատիպեր	Ութ լրատվամիջոցներում կարծրատիպերին անդրադարձների քանակը/միավոր (ընդհանուրի %-ը)
1.	**Գործող իշխանության ներկայացուցիչների վերաբերյալ**	**170 (73%)**
1.1.	*Բացասական կարծրատիպեր՝ կապված «դավաճանության», «հողերի հանձնման», «կապիտուլյացիայի», Հայաստանին ու Արցախին պատուհասած դժվարությունների ու դժբախտությունների, «ազգին կործանման տանող» գործողությունների հետ եւ այլն*	**163 (69.9%)**
1.2.	*Բացասական կարծրատիպեր՝ կապված երկրի անարդյունավետ, ձախողված կառավարման հետ*	**7 (3.1%)**
2.	**Նախորդ իշխանությունների (մինչեւ 2018թ. մայիսի 8-ը) ներկայացուցիչների վերաբերյալ**	**23 (9.8%)**
2.1.	*Բացասական կարծրատիպեր՝ կապված 44-օրյա պատերազմի արդյունքների համար պատասխանատվության եւ ԼՂ «կապիտուլյացիայի» հետ*	**13 (5.5%)**
2.2.	*Բացասական կարծրատիպեր՝ կապված այն մեղադրանքների հետ, որ երկիրը ղեկավարելիս՝ եղել են «կոռումպացված, բնակչությանը կողոպտել են, բռնությունների ենթարկել» եւ այլն*	**10 (4.3%)**
3.	**Հասարակության տարբեր շերտերի ներկայացուցիչների վերաբերյալ**	**40 (17.2%)**
3.1.	*Բացասական կարծրատիպեր՝ կապված ի վնաս Հայաստանի շահերի, հօգուտ այլ պետությունների գործելու մեղադրանքների հետ, թե նրանք գործակալներ են, լրտեսներ, «հինգերորդ շարասյան» ներկայացուցիչներ եւ այլն*	**23 (9.8%)**
3.2.	*Բացասական կարծրատիպեր՝ ԼՂ պաշտոնյաների կողմից հայկական ազգային շահերը (ընդհանուր առմամբ) «դավաճանելու» մեղադրանքների եւ Արցախը «հանձնելու» հետ կապված*	**14 (6.1%)**
3.3.	*Բացասական կարծրատիպեր, երբ Հայաստանում հանցագործություններ եւ ապօրինություններ կատարած անձանց պարագայում ընդգծվում է նրանց ղարաբաղյան ծագումը*	**3 (1.3%)**
	ԸՆԴԱՄԵՆԸ	**233 (100%)**

Աղյուսակ 2

Գործող իշխանության ներկայացուցիչների վերաբերյալ առավել շատ բացասական կարծրատիպեր տարածած լրատվամիջոցները (%-ային հարաբերակցությունը՝ ութ լրատվամիջոցներում տեղ գտած բացասական կարծրատիպերի ընդհանուր քանակի նկատմամբ)							
№	**Լրատվամիջոց**	**Բացասական կարծրատիպեր գործող իշխանության ներկայացուցիչների վերաբերյալ (ընդհանուրի %-ը)**		**Լրատվամիջոց**	***Բացասական կարծրատիպեր՝ կապված «դավաճանության», «հողերի հանձնման», «կապիտուլյացիայի», Հայաստանին ու Արցախին պատուհասած դժվարությունների ու դժբախտությունների , «ազգին կործանման տանող» գործողությունների հետ եւ այլն (ընդհանուրի %-ը)***		**Լրատվամիջոց**	***Բացասական կարծրատիպեր՝ կապված երկրի անարդյունավետ, ձախողված կառավարման հետ (ընդհանուրի %-ը)***
1.	***«Առավոտ»***	**62 (36.5%)**		***«Առավոտ»***	**57 (35%)**		***«Առավոտ»***	**5 (71.4%)**
2.	***«168 ժամ»***	**42 (24.7%)**		***«168 ժամ»***	**41 (25.2%)**		***«Երկիր Մեդիա»***	**1 (14.3%)**
3.	***«Հայկական երկրորդ հեռուստաալիք»***	**35 (20.6%)**		***«Հայկական երկրորդ հեռուստաալիք»***	**35 (21.5%)**		***«168 ժամ»***	**1 (14.3%)**
4.	***«Երկիր Մեդիա»***	**24 (14.1%)**		***«Երկիր Մեդիա»***	**23 (14.1%)**		***«Հայաստանի հանրային հեռուստաընկերության Առաջին ալիք»***	**0 (0%)**
5.	***«Civic.am»***	**5 (2.9%)**		***«Civic.am»***	**5 (3%)**		***«Հայաստանի հանրային հեռուստաընկերության Առաջինի լրատվական ալիք»***	**0 (0%)**
6.	***«Հայաստանի հանրային հեռուստաընկերության Առաջին ալիք»***	**2 (1.2%)**		***«Հայաստանի հանրային հեռուստաընկերության Առաջին ալիք»***	**2 (1.2%)**		***«Հայկական երկրորդ հեռուստաալիք»***	**0 (0%)**
7.	***«Հայաստանի հանրային հեռուստաընկերության Առաջինի լրատվական ալիք»***	**0 (0%)**		***«Հայաստանի հանրային հեռուստաընկերության Առաջինի լրատվական ալիք»***	**0 (0%)**		***«1in.am»***	**0 (0%)**
8.	***«1in.am»***	**0 (0%)**		***«1in.am»***	**0 (0%)**		***«Civic.am»***	**0 (0%)**
	ԸՆԴԱՄԵՆԸ	**170 (100%)**		**ԸՆԴԱՄԵՆԸ**	**163 (100%)**		**ԸՆԴԱՄԵՆԸ**	**7 (100%)**

Աղյուսակ 3

Նախորդ իշխանությունների (մինչեւ 2018թ. մայիսի 8-ը) ներկայացուցիչների վերաբերյալ առավել շատ բացասական կարծրատիպեր տարածած լրատվամիջոցները

(%-ային հարաբերակցությունը՝ ուլթ լրատվամիջոցներում տեղ գտած բացասական կարծրատիպերի ընդհանուր քանակի նկատմամբ)

№	Լրատվամիջոց	Բացասական կարծրատիպեր նախորդ իշխանության ներկայացուցիչների վերաբերյալ (ընդհանուրի %-ը)	Լրատվամիջոց	*Բացասական կարծրատիպեր՝ կապված 44-օրյա պատերազմի արդյունքների համար պատասխանա-տվության եւ ԼՂ «կապիտուլյացիայի» հետ (ընդհանուրի %-ը)*	Լրատվամիջոց	*Բացասական կարծրատիպեր՝ կապված այն մեղադրանքների հետ, որ երկիրը ղեկավարելիս եղել են «կոռումպացված, բնակչությանը կողոպտել են, բռնությունների ենթարկել» եւ այլն (ընդհանուրի %-ը)*
1.	*«Առավոտ»*	9 (39.2%)	*«Առավոտ»*	5 (38.4%)	*«Առավոտ»*	4 (40%)
2.	*«Civic.am»*	8 (34.8%)	*«Civic.am»*	4 (30.8%)	*«Civic.am»*	4 (40%)
3.	*«Երկիր Մեդիա»*	2 (8.7%)	*«Հայաստանի հանրային հեռուստաընկերության Առաջին ալիք»*	2 (15.4%)	*«Երկիր Մեդիա»*	1 (10%)
4.	*«Հայաստանի հանրային հեռուստաընկերության Առաջին ալիք»*	2 (8.7%)	*«Երկիր Մեդիա»*	1 (7.7%)	*«168 ժամ»*	1 (10%)
5.	*«Հայկական երկրորդ հեռուստաալիք»*	1 (4.3%)	*«Հայկական երկրորդ հեռուստաալիք»*	1 (7.7%)	*«Հայաստանի հանրային հեռուստաընկերության Առաջին ալիք»*	0 (0%)
6.	*«168 ժամ»*	1 (4.3%)	*«Հայաստանի հանրային հեռուստաընկերության Առաջինի լրատվական ալիք»*	0 (0%)	*«Հայաստանի հանրային հեռուստաընկերության Առաջինի լրատվական ալիք»*	0 (0%)
7.	*«Հայաստանի հանրային հեռուստաընկերության Առաջինի լրատվական ալիք»*	0 (0%)	*«168 ժամ»*	0 (0%)	*«Հայկական երկրորդ հեռուստաալիք»*	0 (0%)
8.	*«1in.am»*	0 (0%)	*«1in.am»*	0 (0%)	*«1in.am»*	0 (0%)
	ԸՆԴԱՄԵՆԸ	23 (100%)	ԸՆԴԱՄԵՆԸ	13 (100%)	ԸՆԴԱՄԵՆԸ	10 (100%)

Աղյուսակ 4

Հասարակության տարբեր շերտերի ներկայացուցիչների վերաբերյալ առավել շատ բացասական կարծրատիպեր տարածած լրատվամիջոցները (%-ային հարաբերակցությունը՝ ութ լրատվամիջոցներում տեղ գտած բացասական կարծրատիպերի ընդհանուր քանակի նկատմամբ)									
№	**Լրատվամիջոց**	**Բացասական կարծրատիպեր հասարակության տարբեր շերտերի ներկայացուցիչների վերաբերյալ (ընդհանուրի %-ը)**	**Լրատվամիջոց**	**Բացասական կարծրատիպեր՝ կապված ի վնաս Հայաստանի շահերի, հօգուտ այլ պետությունների գործելու մեղադրանքների հետ, թե նրանք գործակալներ են, լրտեսներ, «հինգերորդ շարասյան» ներկայացուցիչներ եւ այլն (ընդհանուրի %-ը)**	**Լրատվամիջոց**	**Բացասական կարծրատիպեր՝ ԼՂ պաշտոնյաների կողմից հայկական ազգային շահերը (ընդհանուր առմամբ) «դավաճանելու» մեղադրանքների եւ Արցախը «հանձնելու» հետ կապված (ընդհանուրի %-ը)**	**Լրատվամիջոց**	**Բացասական կարծրատիպեր՝ երբ Հայաստանում հանցագործություններ եւ ապօրինություններ կատարած անձանց պարագայում ընդգծվում է նրանց ղարաբաղյան ծագումը (ընդհանուրի %-ը)**
1.	***«Civic.am»***	**21 (52.5%)**	***«Civic.am»***	**15 (65.4%)**	***«Civic.am»***	**6 (42.9%)**	***«168 ժամ»***	**2 (66.7%)**
2.	***«Առավոտ»***	**7 (17.5%)**	***«Առավոտ»***	**3 (13.1%)**	***«Առավոտ»***	**4 (28.7%)**	***«Երկիր Մեդիա»***	**1 (33.3%)**
3.	***«168 ժամ»***	**4 (10%)**	***«Երկիր Մեդիա»***	**1 (4.3%)**	***«Հայաստանի հանրային հեռուստաընկերության Առաջին ալիք»***	**1 (7.1%)**	***«Առավոտ»***	**0 (%)**
4.	***«Երկիր Մեդիա»***	**2 (5%)**	***«Հայաստանի հանրային հեռուստաընկերության Առաջին ալիք»***	**1 (4.3%)**	***«Հայաստանի հանրային հեռուստաընկերության Առաջինի լրատվական ալիք»***	**1 (7.1%)**	***«Հայաստանի հանրային հեռուստաընկերության Առաջին ալիք»***	**0 (%)**
5.	***«Հայաստանի հանրային հեռուստաընկերության Առաջին ալիք»***	**2 (5%)**	***«Հայաստանի հանրային հեռուստաընկերության Առաջինի լրատվական ալիք»***	**1 (4.3%)**	***«168 ժամ»***	**1 (7.1%)**	***«Հայաստանի հանրային հեռուստաընկերության Առաջինի լրատվական ալիք»***	**0 (%)**
6.	***«Հայաստանի հանրային հեռուստաընկերության Առաջինի լրատվական ալիք»***	**2 (5%)**	***«168 ժամ»***	**1 (4.3%)**	***«1in.Am»***	**1 (7.1%)**	***«Հայկական երկրորդ հեռուստաալիք»***	**0 (%)**
7.	***«1in.am»***	**2 (5%)**	***«1in.am»***	**1 (4.3%)**	***«Երկիր Մեդիա»***	**0 (%)**	***«1in.am»***	**0 (%)**

8.	***«Հայկական երկրորդ հեռուստա-ալիք»***	**0 (%)**		***«Հայկական երկրորդ հեռուստա-ալիք»***	**0 (%)**		***«Հայկական երկրորդ հեռուստա-ալիք»***	**0 (%)**		***«Civic.am»***	**0 (%)**
ԸՆԴԱՄԵՆԸ		**40 (100%)**		**ԸՆԴԱՄԵՆԸ**	**23 (100%)**		**ԸՆԴԱՄԵՆԸ**	**14 (100%)**		**ԸՆԴԱՄԵՆԸ**	**3 (100%)**

Աղյուսակ 5

№	Բացասական կարծրատիպեր	Ութ ԶԼՄ-ներում բացասա-կան կարծրա-տիպերի անդրա-դարձների քանակը/ միավոր	Կարծրատիպերին անդրադարձների բնույթը/միավոր (%-ային հարաբերակցությունը՝ տվյալ գծով անդրադարձների քանակի նկատմամբ)			Կարծրատիպի հեղինակը/ միավոր (%-ային հարա-բերակցությունը՝ տվյալ գծով անդրադարձների քանակի նկատմամբ)		Ատելության/ բռնության խոսքի տարրերի առկայությունը/ միավոր (%-ային հարաբերակ-ցությունը՝ տվյալ գծով անդրադարձների քանակի նկատմամբ)		Նյութերում վերը թվարկված մեղադրանքները հաստատող փաստերի, փաստարկների, տեղեկությունների առկայությունը կամ բացակայությունը/ միավոր (%-ային հարաբերակ-ցությունը՝ տվյալ գծով անդրադարձների քանակի նկատմամբ)		Անձնական վիրավորանքի առկայությունը/ միավոր (%-ային հարաբերակ-ցությունը՝ տվյալ գծով անդրա-դարձների քանակի նկատմամբ)	
			Համաձայ-նություն	Անհամա-ձայնություն	Չեզոք	Լրագրող/ հաղորդ-ման հեղինակ	Այլ	Առկա է	Առկա չէ	Առկա է	Առկա չէ	Առկա է	Առկա չէ
1.	**Գործող իշխանության ներկայացուցիչների վերաբերյալ**	**170 (100%)**	**165 (97%)**	**5 (3%)**	**0 (0%)**	**40 (23.5%)**	**130 (76.5%)**	**8 (4.7%)**	**162 (95.3%)**	**145 (85.3%)**	**25 (14.7%)**	**68 (40%)**	**102 (60%)**
1.1.	*Բացասական կարծրատիպեր՝ կապված «դավաճանության», «հողերի հանձնման», «կապիտուլյացիայի», Հայաստանին ու Արցախին պատուհասած դժվարությունների ու դժբախտությունների, «ազգին կործանման տանող» գործողությունների հետ եւ այլն*	**163 (100%)**	**158 (96.9%)**	**5 (3.1%)**	**0 (0%)**	**38 (23.3%)**	**125 (76.7%)**	**7 (4.3%)**	**156 (95.7%)**	**139 (85.3%)**	**24 (14.7%)**	**67 (41.1%)**	**96 (58.9%)**
1.2.	*Բացասական կարծրատիպեր՝ կապված երկրի անարդյունավետ, ձախողված կառավարման հետ*	**7 (100%)**	**7 (100%)**	**0 (0%)**	**0 (0%)**	**2 (28.5%)**	**5 (71.5%)**	**1 (14.3%)**	**6 (85.7%)**	**6 (85.7%)**	**1 (14.3%)**	**1 (14.3%)**	**6 (85.7%)**
2.	**Նախորդ իշխանությունների (մինչեւ 2018թ. մայիսի 8-ը)**	**23 (100%)**	**20 (86.9%)**	**3 (13.1%)**	**0 (0%)**	**7 (30.4%)**	**16 (69.6%)**	**1 (4.3%)**	**22 (95.7%)**	**15 (65.2%)**	**8 (34.8%)**	**3 (13.1%)**	**20 (86.9%)**

	ներկայացուցիչների վերաբերյալ, որոնք այսօր ընդդիմություն են												
2.1.	*Բացասական կարծրատիպեր՝ կապված 44-օրյա պատերազմի արդյունքների համար պատասխանա-տվության եւ ԼՂ «կապիտուլյացիայի» հետ*	**13 (100%)**	**13 (100%)**	**0 (0%)**	**0 (0%)**	**2 (15.4%)**	**11 (84.6%)**	**0 (0%)**	**13 (100%)**	**8 (61.5%)**	**5 (38.5%)**	**2 (15.4%)**	**11 (84.6%)**
2.2.	*Բացասական կարծրատիպեր՝ կապված այն մեղադրանքների հետ, որ երկիրը ղեկավարելիս՝ եղել են «կոռումպացված, բնակչությանը կողոպտել են, բռնությունների ենթարկել» եւ այլն*	**10 (100%)**	**7 (70%)**	**3 (30%)**	**0 (0%)**	**5 (50%)**	**5 (50%)**	**1 (10%)**	**9 (90%)**	**7 (70%)**	**3 (30%)**	**1 (10%)**	**9 (90%)**
3.	**Հասարակության տարբեր շերտերի ներկայացուցիչների վերաբերյալ**	**40 (100%)**	**37 (92.5%)**	**3 (7.5%)**	**0 (0%)**	**6 (15%)**	**34 (85%)**	**2 (5%)**	**38 (95%)**	**29 (72.5%)**	**11 (27.5%)**	**9 (22.5%)**	**31 (77.5%)**
3.1.	*Բացասական կարծրատիպեր՝ կապված ի վնաս Հայաստանի շահերի, հօգուտ այլ պետությունների գործելու մեղադրանքների հետ, թե նրանք գործակալներ են, լոտեսներ, «հինգերորդ շարասյան» ներկայացուցիչներ եւ այլն*	**23 (100%)**	**21 (91.3%)**	**2 (8.7%)**	**0 (0%)**	**3 (13%)**	**20 (87%)**	**0 (0%)**	**23 (100%)**	**14 (60.9%)**	**9 (39.1%)**	**4 (17.4%)**	**19 (82.6%)**
3.2.	*Բացասական կարծրատիպեր՝ ԼՂ պաշտոնյաների կողմից հայկական ազգային շահերը (ընդհանուր առմամբ) «դավաճանելու» մեղադրանքների եւ Արցախը «հանձնելու» հետ կապված*	**14 (100%)**	**14 (100%)**	**0 (0%)**	**0 (0%)**	**1 (7.1%)**	**13 (92.9%)**	**2 (14.3%)**	**12 (85.7%)**	**12 (85.7%)**	**2 (7.1%)**	**3 (21.4%)**	**11 (78.6%)**

3.3.	*Բացասական կարծրատիպեր, երբ Հայաստանում հանցագործություն-ներ եւ ապօրինություններ կատարած անձանց պարագայում ընդգծվում է նրանց ղարաբաղյան ծագումը*	**3 (100%)**	**2 (66.7%)**	**1 (33.3%)**	**0 (0%)**	**2 (66.7%)**	**1 (33.3%)**	**0 (0%)**	**3 (100%)**	**3 (100%)**	**0 (0%)**	**2 (66.7%)**	**1 (33.3%)**
	ԸՆԴԱՄԵՆԸ	**233 (100%)**	**222 (95.3%)**	**11 (4.7%)**	**0 (0%)**	**53 (22.7%)**	**180 (77.3%)**	**11 (4.7%)**	**222 (95.3%)**	**189 (81.1%)**	**44 (18.9%)**	**80 (34.3%)**	**153 (65.7%)**

Աղյուսակ 6

Լրատվամիջոցների հրապարակումներում առավել շատ տեղ գտած բացասական կարծրատիպեր/միավոր (%-ային հարաբերակցությունը՝ ութ լրատվամիջոցներում տեղ գտած բացասական կարծրատիպերի ընդհանուր քանակի նկատմամբ)					
№	**Լրատվամիջոց**	**Լրատվամիջոցներում կարծրատիպերին անդրադարձների քանակը/ միավոր (ընդհանուրի %-ը)**	**Կարծրատիպերին անդրադարձների բնույթը/միավոր**		
			Համաձայնություն	***Անհամաձայնություն***	***Չեզոք***
1.	*«Առավոտ»*	**78 (33.5%)**	**75**	**3**	**0**
2.	*«168 ժամ»*	**47 (20.1%)**	**46**	**1**	**0**
3.	*«Հայկական երկրորդ հեռուստաալիք»*	**36 (15.4%)**	**36**	**0**	**0**
4	*«Civic.am»*	**34 (14.6%)**	**29**	**5**	**0**
5.	*«Երկիր Մեդիա»*	**28 (12%)**	**26**	**2**	**0**
6.	*«Հայաստանի հանրային հեռուստաընկերության Առաջին ալիք»*	**6 (2.6%)**	**6**	**0**	**0**
7.	*«Հայաստանի հանրային հեռուստաընկերության Առաջինի լրատվական ալիք»*	**2 (0.9%)**	**2**	**0**	**0**
8.	*«1in.am»*	**2 (0.9%)**	**2**	**0**	**0**
	ԸՆԴԱՄԵՆԸ	**233 (100%)**	**222**	**11**	**0**

Աղյուսակ 7

Լրատվամիջոցների հրապարակումներում տեղ գտած բացասական կարծրատիպերի հետ արտահայտված համաձայնությունների քանակը/միավոր (%-ային հարաբերակցությունը՝ նույն լրատվամիջոցում տեղ գտած բացասական կարծրատիպերի ընդհանուր քանակի նկատմամբ)					
№	**Լրատվամիջոց**	**Լրատվամիջոցներում կարծրատիպերին անդրադարձների քանակը/ միավոր**	**Կարծրատիպերին անդրադարձների բնույթը/միավոր (%-ային հարաբերակցությունը՝ կարծրատիպերին անդրադարձների քանակի նկատմամբ)**		
			Համաձայնություն	***Անհամաձայնություն***	***Չեզոք***
1.	*«Հայկական երկրորդ հեռուստաալիք»*	**36 (100%)**	**36 (100%)**	**0 (0%)**	**0 (0%)**
2.	*«Հայաստանի հանրային հեռուստաընկերության Առաջին ալիք»*	**6 (100%)**	**6 (100%)**	**0 (0%)**	**0 (0%)**
3.	*«Հայաստանի հանրային հեռուստաընկերության Առաջինի լրատվական ալիք»*	**2 (100%)**	**2 (100%)**	**0 (0%)**	**0 (0%)**
4	*«1in.am»*	**2 (100%)**	**2 (100%)**	**0 (0%)**	**0 (0%)**
5.	*«168 ժամ»*	**47 (100%)**	**46 (97.9%)**	**1 (2.1%)**	**0 (0%)**
6.	*«Առավոտ»*	**78 (100%)**	**75 (96.2%)**	**3 (3.8%)**	**0 (0%)**
7.	*«Երկիր Մեդիա»*	**28 (100%)**	**26 (92.9%)**	**2 (7.1%)**	**0 (0%)**
8.	*«Civic.am»*	**34 (100%)**	**29 (85.3%)**	**5 (14.7%)**	**0 (0%)**
	ԸՆԴԱՄԵՆԸ	**233 (100%)**	**222 (95.3%)**	**11 (4.7%)**	**0 (0%)**

Աղյուսակ 8

Լրատվամիջոցի լրագրողի/հաղորդման հեղինակի կողմից կիրառված բացասական կարծրատիպերի քանակը/միավոր (%-ային հարաբերակցությունը՝ նույն լրատվամիջոցում տեղ գտած բացասական կարծրատիպերի ընդհանուր քանակի նկատմամբ)				
№	**Լրատվամիջոց**	**Լրատվամիջոցներում կարծրատիպերին անդրադարձների քանակը/ միավոր**	**Կարծրատիպի հնչեցնողը/միավոր (%-ային հարաբերակցությունը՝ կարծրատիպերին անդրադարձների քանակի նկատմամբ)**	
			Լրագրող/ հաղորդման հեղինակ	***Այլ***
1.	*«168 ժամ»*	**47 (100%)**	**22 (46.8%)**	**25 (53.2%)**
2.	*«Առավոտ»*	**78 (100%)**	**20 (25.6%)**	**58 (74.4%)**
3.	*«Civic.am»*	**34 (100%)**	**8 (23.5%)**	**26 (76.5%)**
4	*«Երկիր Մեդիա»*	**28 (100%)**	**3 (10.7%)**	**25 (89.3%)**
5.	*«Հայկական երկրորդ հեռուստաալիք»*	**36 (100%)**	**0 (0%)**	**36 (100%)**
6.	*«Հայաստանի հանրային հեռուստաընկերության Առաջին ալիք»*	**6 (100%)**	**0 (0%)**	**6 (100%)**
7.	*«Հայաստանի հանրային հեռուստաընկերության Առաջինի լրատվական ալիք»*	**2 (100%)**	**0 (0%)**	**2 (100%)**
8.	*«1in.am»*	**2 (100%)**	**0 (0%)**	**2 (100%)**
	ԸՆԴԱՄԵՆԸ	**233 (100%)**	**53 (22.7%)**	**180 (77.3%)**

Աղյուսակ 9

Լրատվամիջոցներում տեղ գտած բացասական կարծրատիպերի ժամանակ՝ ատելության/բռնության խոսքի տարրերի առկայությունը/միավոր (ատելության/բռնության խոսքի տարրերի %-ային հարաբերակցությունը՝ նույն լրատվամիջոցում տեղ գտած բացասական կարծրատիպերի ընդհանուր քանակի նկատմամբ)				
№	**Լրատվամիջոց**	**Լրատվամիջոցներում կարծրատիպերին անդրադարձների քանակը/ միավոր**	**Ատելության/բռնության խոսքի տարրերի առկայությունը/միավոր (%-ային հարաբերակցությունը՝ կարծրատիպերին անդրադարձների քանակի նկատմամբ)**	
			Առկա է	***Առկա չէ***
1.	*«Civic.am»*	**34 (100%)**	**4 (11.8%)**	**30 (88.2%)**
2.	*«Հայկական երկրորդ հեռուստաալիք»*	**36 (100%)**	**4 (11.1%)**	**32 (88.9%)**
3.	*«168 ժամ»*	**47 (100%)**	**2 (4.3%)**	**45 (95.7%)**
4	*«Առավոտ»*	**78 (100%)**	**1 (1.3%)**	**77 (98.7%)**
5.	*«Երկիր Մեդիա»*	**28 (100%)**	**0 (0%)**	**28 (100%)**
6.	*«Հայաստանի հանրային հեռուստաընկերության Առաջին ալիք»*	**6 (100%)**	**0 (0%)**	**6 (100%)**
7.	*«Հայաստանի հանրային հեռուստաընկերության Առաջինի լրատվական ալիք»*	**2 (100%)**	**0 (0%)**	**2 (100%)**
8.	*«1in.am»*	**2 (100%)**	**0 (0%)**	**2 (100%)**
	ԸՆԴԱՄԵՆԸ	**233 (100%)**	**11 (4.7%)**	**222 (95.3%)**

Աղյուսակ 10

Լրատվամիջոցներում տեղ գտած բացասական կարծրատիպերի ժամանակ՝ մեղադրանքները հաստատող փաստերի, փաստարկների, տեղեկությունների բացակայությունը/միավոր (մեղադրանքները հաստատող փաստերի, փաստարկների, տեղեկությունների %-ային հարաբերակցությունը՝ նույն լրատվամիջոցում տեղ գտած բացասական կարծրատիպերի ընդհանուր քանակի նկատմամբ)				
№	**Լրատվամիջոց**	**Լրատվամիջոցներում կարծրատիպերին անդրադարձների քանակը/ միավոր**	**Նյութերում վերը թվարկված մեղադրանքները հաստատող փաստերի, փաստարկների, տեղեկությունների առկայությունը կամ բացակայությունը/միավոր (%-ային հարաբերակցությունը՝ կարծրատիպերին անդրադարձների քանակի նկատմամբ)**	
			Առկա է	***Առկա չէ***
1.	*«Հայաստանի հանրային հեռուստաընկերության Առաջինի լրատվական ալիք»*	**2 (100%)**	**0 (0%)**	**2 (100%)**
2.	*«Երկիր Մեդիա»*	**28 (100%)**	**12 (42.9%)**	**16 (57.1%)**
3.	*«Civic.am»*	**34 (100%)**	**23 (67.6%)**	**11 (32.4%)**
4	*«Առավոտ»*	**78 (100%)**	**69 (88.5%)**	**9 (11.5%)**
5.	*«168 ժամ»*	**47 (100%)**	**42 (89.4%)**	**5 (10.6%)**
6.	*«Հայկական երկրորդ հեռուստաալիք»*	**36 (100%)**	**35 (97.2%)**	**1 (2.8%)**
7.	*«Հայաստանի հանրային հեռուստաընկերության Առաջին ալիք»*	**6 (100%)**	**6 (100%)**	**0 (0%)**
8.	*«1in.am»*	**2 (100%)**	**2 (100%)**	**0 (0%)**
ԸՆԴԱՄԵՆԸ		**233 (100%)**	**189 (81.1%)**	**44 (18.9%)**

Աղյուսակ 11

Լրատվամիջոցներում տեղ գտած բացասական կարծրատիպերի ժամանակ՝ անձնական վիրավորանքի առկայությունը/միավոր (անձնական վիրավորանքի %-ային հարաբերակցությունը՝ նույն լրատվամիջոցում տեղ գտած բացասական կարծրատիպերի ընդհանուր քանակի նկատմամբ)				
№	**Լրատվամիջոց**	**Լրատվամիջոցներում կարծրատիպերին անդրադարձների քանակը/ միավոր**	**Անձնական վիրավորանքի առկայությունը/միավոր (%-ային հարաբերակցությունը՝ կարծրատիպերին անդրադարձների քանակի նկատմամբ)**	
			Առկա է	***Առկա չէ***
1.	*«Հայկական երկրորդ հեռուստաալիք»*	**36 (100%)**	**27 (75%)**	**9 (25%)**
2.	*«168 ժամ»*	**47 (100%)**	**22 (46.8%)**	**25 (53.2%)**
3.	*«Երկիր Մեդիա»*	**28 (100%)**	**8 (28.6%)**	**20 (71.4%)**
4	*«Civic.am»*	**34 (100%)**	**9 (26.5%)**	**25 (73.5%)**
5.	*«Առավոտ»*	**78 (100%)**	**14 (17.9%)**	**64 (82.1%)**
6.	*«Հայաստանի հանրային հեռուստաընկերության Առաջին ալիք»*	**6 (100%)**	**0 (0%)**	**6 (100%)**
7.	*«Հայաստանի հանրային հեռուստաընկերության Առաջինի լրատվական ալիք»*	**2 (100%)**	**0 (0%)**	**2 (100%)**
8.	*«1in.am»*	**2 (100%)**	**0 (0%)**	**2 (100%)**
	ԸՆԴԱՄԵՆԸ	**233 (100%)**	**80 (34.3%)**	**153 (65.7%)**

ԵՐԵՎԱՆԻ ՄԱՄՈՒԼԻ ԱԿՈՒՄԲ
www.ypc.am